

ԹՅՈՒՐԻՄԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

«Ժայռի» № 14-ում Արշ. Մեհրաբյանը իմ «Գրականություն և կյանք» դասախոսության մեջ վերջին ժամանակներին վերաբերյալ խոսքը մի քանի տողում սեղմելով ընդհանուր բառերով ասել է. դասախոսը շեշտեց մի քանի անբարեհաջող պայմաններ, որոնց շնորհիվ գրողի և գրականության համար անտանելի կացություն է ստեղծված, և հրավեր կարդաց սթափվել, քանի որ այս անտարբերությունը մեզ դեպի անկումն է տանում:

Այդ նախադասությունն ընթերցողներից շատերի վրա այն տպավորությունն է արել, իբր ես խոսած լինիմ գրողների նյութական դրության վրա և հորդորած նրանց ապահովեն, թե չէ այդ մեզ (իբրև թե ժողովրդին) դեպի անկումն է տանում:

Այդպես չի, նեղ է հասկացված ու տգեղ:

Ես ասել եմ, մեր կյանքը շատ անբարեհաջող հանգամանքներ ունի գրողի ու գրականության համար:

Մենք մի փոքրիկ ժողովուրդ ենք, այն էլ կտոր-կտոր եղած, միշտ ենթակա հալածանքի ու աղետների, ուժասպառ ու խավար:

Այս փոքրիկ ժողովրդի ի՞նչ մասը կարդալ գիտե, կարդացողների ի՞նչ մասն է հետաքրքրվում գրականությամբ, հետաքրքրվողներից քանի՞ հոգի են գիրք առնում, առնողներից էլ քանի՞սն են լավն ու վատը ջոկում...

Ասել եմ, որ մեր ընթերցողը դեռ այն շրջանումն է, որ իր մտավոր սնունդն առնում է լրագրից, լրագրի մեջ էլ ավելի սիրում է կռիվն ու աղմուկը:

Ասել եմ, որ մամուլն էլ գրականության վերաբերությամբ եղել է միշտ կուսակցական ու անձեռնհաս և չի տվել լուրջ գրական քննադատություններ: Նյութականի մասին, եթե խոսք է եղել՝ ասել եմ. մեր մեջ հենց որ խոսք է լինում գրականության ձախորդ պայմանների մասին, միշտ նյութական վիճակն են հասկանում: Բայց դա որքան էլ ծանր հանգամանք լինի, ավելի շատ հետևանք է, քան թե պատճառ, և դա չի, որ

գրականություն է ստեղծում: Գրականության համար պետք է ունենալ ճաշակով, հասկացող, գեղարվեստի պահանջը դնող ու գրական գործը գնահատող հասարակություն:

Օրինակ Թիֆլիսը, ռուսահայոց մտավոր կենտրոնը: Գրական շրջաններ չկան, խոսք չի լինում գրականության վրա, չեն հետաքրքրվում գեղարվեստով, չունեն հոգեկան ու գեղարվեստական հաճույքի ճաշակն ու պահանջը: Մինչև անգամ լեզու չկա, եղածն էլ մի քանի հարյուր բառ է, հաճախ սուտ ու սխալ, մինը մյուսի տեղը դրած, և առհասարակ անկազմ ու անկերպարան, հարևան լեզուների մի աններդաշնակ խառնուրդ: Ու մեր գրողները իրենց միշտ խորթ են զգում այդ հասարակության մեջ, իրենց լեզուն էլ մոռանում են այդտեղ:

Այս բոլորին որպես հետևանք նկատել եմ այն երևույթը, որ մեր գրողներից շատերի լավ գործերի մասին խոսելիս, հիշում են նրանց առաջին գործերը: Ինչո՞ւ:

Որովհետև նոր մտնելով գրականության մեջ, դեռ թարմ ուժերով ու ոգևորված տվել են իրենց երախայրիքը: Ապա ընկնելով մեր իրականության սպանիչ պայմանների տակ՝ հետզհետե թուլացել են և արբուն հասակում դարձել անտարբեր ու անպտուղ: Միանգամայն հակառակը լուսավոր երկրներում ու լավ միջավայրում ապրող գրողների, որոնք հետզհետե զարգանում են ու բեղմնավորում:

Կամ սրանից ավելի վատն է պատահում մեր մեջ: Գրողը հարմարվում է ամբոխի ճաշակին, անում այն, ինչ որ չպետք է անի, այն է տալիս, ինչ որ դուրս է գնում շուկայում:

Եվ այսպիսով **ընկնում է տաղանդը**: Պարզ է, թե անբարեհաջող պայմաններ ասելով ես ինչ եմ հասկանում և **անկումն** ում է վերաբերում: